ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 16-ԱՄՅԱԿԸ

Վեհափառ Հայրապետի գահակալության գրեթե առաջին իսկ օրերից, Նրա հրավերով և նախաձեռնությամբ, Մայր Աթոռին առընթեր կազմվում է հայ անվանի և վաստակավոր ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն իր ինքնաբուխ նվիրումով ու գիտական հեղինակությամբ իր վրա է վերցնում ս. Էջմիածնի, վանքերի և եկեղեցիների շինարարության անհետաձգելի աշխատանքների ընդհանուր վերահսկողությունը՝ մարմին տալու համար շինարար և կառուցող Հայոց Հայրապետի ծրագրերին:

Հայրապետական Իր անդրանիկ կոնդակում Վեհափառ Հայրապետը 1955 թվականի դեկտեմբերի 1-ին, Իր գործունեության ապագա ծրագրերի իրականացման ճանապարհի վրա, շեշտում էր.

«Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսին են ս. Հռիփսիմեն, ս. Գայանեն, Խոր-Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի այուները կհանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի, և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»:

Այս մտածումների լույսի տակ, Վեհափառ Հայրապետի հրավերով, 1957 թվականին Մայր Աթոռում կազմվեց ճարտարապետների առաջին հանձնաժողովը հետևյալ կազմով.

1. **Մարտիրոս Սարյան,** մեծանուն Վարպետ, նկարիչ՝ պատվո նախագահ.

2. **Ճարտարապետ Միքայել Մազմանյան,** արվեստի վաստակավոր գործիչ, «Երևանանախագիծ» ինստիտուտի արվեստանոցի վարիչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ՝ նախագահ.

3. **Պրոֆ.-դոկտ. Կարո Ղաֆադարյան,** հայտնի պատմաբան ու հնագետ, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր.

4. **Ճարտարապետ, պրոֆ. Վարազդատ Հարությունյան,** արվեստի վաստակավոր գործիչ, դասախոս Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի և նախագահ Հայաստանի ճարտարապետների միության.

5. **Ճարտարապետ, դոցենտ Ռաֆայել Իսրայելյան,** արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական նախագծային ինստիտուտի ճարտարապետական արվեստանոցի վարիչ և գիտաշխատող արվեստի ինստիտուտի.

6. **Ճարտարապետ Կոնստանտին Հովհաննիսյան,** արվեստի վաստակավոր գոր-

ծիչ, ուրարտագետ, հնությունների պահպանության բաժնի վարիչ և դասախոս Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի.

7. **Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյան,** «Երևաննախագիծ» ինստիտուտի արվեստանոցի վարիչ:

Հանձնաժողովի աշխատանքներին հանախ իր մասնակցությունն է բերում նաև ժողովրդական նկարիչ **Գրիգոր Խանջյանը,** որը 1968 թվականից դառնում է մնայուն անդամ հանձնաժողովի:

Ճարտարապետների հանձնաժողովն ամիսը մեկ կամ երկու անգամ նիստեր է գումարում Վեհարանում՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Այստեղ երախտագիտությամբ պետք է արձանագրել ճարտարապետների հանձնաժողովի անցյալ 16 տարիների ընթացքում կատարած աշխատանքները և՛ Մայր Աթոռում, և՛ Մայր Աթոռի շրջափակից դուրս (տես «Էջմիածին» ամսագիր, 1965, №№ ԺԱ—ԺԲ, էջ 26—29):

Տարիների ընթացքում, սակայն, դժբախտաբար, հանձնաժողովի անդամներից ոմանք մահացան. մեծանուն Վարպետը՝ Մարտիրոս Սարյան՝ 1972 թ., Միքայել Մազմանյան՝ 1971 թ., Ռաֆայել Իսրայելյան՝ 1973 թ.:

Որով վերջերս Վեհափառ Հայրապետի ցանկությամբ վերակազմվեց և ամբողջացավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. **Դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյան**՝ նախագահ.
2. **Դոկտ.-պրոֆ. Կարո Ղաֆադարյան.**
3. **Դոկտ.-պրոֆ. Կոնստանտին Հովհաննիսյան.**
4. **Ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյան.**
5. **Կոնստանտին Ալթունյան,** ինժեներ-կոնստրուկտոր.
6. **Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյան.**
7. **Ճարտարապետ Արծրունի Գալիկյան:**

Հունվարի 26-ին, շաբաթ օրը, ժամը 13-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի լիագումար նիստը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ և սիրով ողջունում է նորակազմ հանձնաժողովին և մաղթում նորանոր հաջողություններ՝ նրա հետագա եկեղեցաշեն գործունեության ճանապարհի վրա:

Հանուն ճարտարապետների հանձնաժողովի, դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանը շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ հանձնաժողովի հանդեպ ցույց տրված մեծ պատվի համար, և վստահություն, որ հետ այսու էլ հանձնաժողովը մեր շինարար Հայրապետի նախագահության ներքո կշարունակի իր աշխատանքներն առանց ընդհատման՝ իրագործելու համար Նրա շինարարական-կառուցողական նոր ծրագրերը՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ժամը 15-ին Վեհարանում, ի պատիվ ճարտարապետների հանձնաժողովի, տրվում է ճաշկերույթ, ուր փոխանակվում են ջերմ ու հայրենասիրական ճառեր՝ սրտագին մթնոլորտում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ողջունում է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի նորընտիր կազմին և մաղթում, որ նա իրեն հատուկ ինքնաբուխ նվիրումով ու ճշմարիտ հայ մարդու մեծ սրտով շարունակի իր աշխատանքները Ամենայն Հայոց Հայրապետի կողքին՝ մարմին տալու համար Նրա շինարարական բոլոր ձեռնարկներին: